Հաստատված է՝
Հայաստանի Հանրապետության փաստաբանների
պալատի նախագահի 15.10.2019թ. թիվ 442-Լ որոշմամբ

* * * * *

Կ Ա Ր Գ

«60 ՓԱՍՏԱԲԱՆԻ «ՓԱՍՏԱԲԱՆ ԵԶԵԳԵԼՅԱՆ ՕԺԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ» ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ»

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն կարգն ընդունվել է «Փաստաբանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի (**այսուհետ՝ Օրենք**) 13-րդ հոդվածի ութերորդ մասի պահանջին համապատասխան և սահմանում է Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի (**այսուհետ՝ Պալատ**) կողմից բարերար Ռայմոն Եզեգելյանից (**այսուհետ՝ Բարերար**) տրամադրվող նվիրաբերության (**այսուհետ՝ «Փաստաբան Եզեգելյան օժանդակություն»**) գումարի տնօրինման հետ կապված հարաբերությունները:
2. «Փաստաբան Եզեգելյան օժանդակության» շահառու է համարվում սույն կարգին համապատասխան որոշված փաստաբանը (**այսուհետ՝ Շահառու**):
3. Շահառուների քանակը չի կարող գերազանցել 60-ը (վաթսունը) (**այսուհետ՝ Շահառուների քանակ**):
4. «Փաստաբան Եզեգելյան օժանդակությունը» նախատեսում է մեկ Շահառուի համար մեկ տարվա անդամավճարի վճարում, որպես կանխավճար:

* * *

II. ՇԱՀԱՌՈՒՆԵՐԻՆ ՈՐՈՇԵԼՈՒ ԿԱՐԳԸ

5. Շահառուներին որոշելու համար ձևավորվում է ժամանակավոր հանձնաժողով (**այսուհետ՝ Հանձնաժողով**) հետևյալ կազմով՝
   1) Պալատի նախագահի խորհրդական,
   2) Պալատի ընդհանուր դեպարտամենտի ղեկավար,
   3) Պալատի գանձապահ:

6. Հանձնաժողովը՝
   1) ստուգում է Շահառուների թեկնածուների համապատասխանությունը սույն կարգի պահանջներին.
   2) հաստատում է Շահառուների ցանկը և ներկայացնում է Պալատի ֆինանսական տնօրենին:
7. Շահառուներին որոշելու համար Հանձնաժողովն՝ ըստ ստորև նշված առաջնահերթության, նախապատվությունը տալիս է հետևյալ պահանջներին համապատասխանող փաստաբաններին՝
   1) *60-69 տարեկան փաստաբաններին*՝ ովքեր չունեն մշտական աշխատանք, **ոչ ավել, քան 10 (տասը) փաստաբան:** Այս խմբում նախապատվությունը տրվում է տարիքով ավագ փաստաբաններին.
   2) *2-րդ կամ 3-րդ կարգի հաշմանդամ փաստաբաններին*՝ **ոչ ավել, քան 8 (ութ) փաստաբան:** Այս խմբում նախապատվությունը տրվում է առավել վաղ հաշմանդամության կարգ ստացած փաստաբաններին.
   3) *միայնակ մայր հանդիսացող փաստաբաններին*՝ **ոչ ավել, քան 5 (հինգ) փաստաբան:** Սույն կարգի իմաստով միայնակ մայր է համարվում ամուսնության մեջ չգտնվող այն կինը, ում խնամքի տակ գտնվում է առնվազն մեկ անչափահաս երեխա, որի ծննդյան վկայականում **(ա)** բացակայում է երեխայի հոր մասին գրանցումը, կամ, **(բ)** երեխայի հոր մասին գրանցումը կատարվել է ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով՝ մոր ցուցումով, կամ, **(գ)** երեխայի հայրը մահացել է, կամ **(դ)** ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով երեխայի հայրը ճանաչվել է անհայտ բացակայող կամ հայտարարվել է մահացած: Այս խմբում նախապատվությունը տրվում է առավել շատ երեխա ունեցող, իսկ երեխաների հավասար քանակի դեպքում՝ տարիքով կրտսեր երեխա ունեցող փաստաբաններին.
   4) *ընտանիքում պարտադիր զինվորական ծառայության զորակոչված (զինվորական ծառայության մեջ գտնվող) զավակ ունեցող փաստաբաններին*՝ **ոչ ավել, քան 7 (յոթ) փաստաբան:** Այս խմբում նախապատվությունը տրվում է՝ **(ա)** ընտանիքում մեկից ավելի զինծառայող ունեցող փաստաբաններին կամ **(բ)** զինվորական ծառայության առավել ուշ զորակոչված զորակոչիկ ունեցող փաստաբաններին.
   5) *նյութական դժվարություններ ունեցող մարզի փաստաբաններին*՝ **ոչ ավել, քան 10 (տասը) փաստաբան,** յուրաքանչյուր մարզից մեկ փաստաբան՝ մարզային համակարգողի գրավոր առաջարկով.
   6) *երկու կամ ավելի անչափահաս երեխաներ ունեցող փաստաբաններին*՝ **ոչ ավել, քան 10 (տասը) փաստաբան:** Այս

խմբում նախապատվությունը տրվում է առավել շատ երեխա ունեցող, իսկ երեխաների հավասար քանակի դեպքում՝ տարիքով կրտսեր երեխա ունեցող փաստաբաններին.

7) *ոչ ավել քան մեկ տարվա փաստաբանական ստաժ ունեցող և աշխատանք չունեցող փաստաբաններին*՝ **ոչ ավել, քան 10 (տասը) փաստաբան:** Այս խմբում նախապատվությունը տրվում է տարիքով առավել կրտսեր փաստաբաններին:

8. Սույն կարգի 7-րդ կետում նշված խմբերում Շահառուների տեղերի ավելացման դեպքում, այդ տեղերը կարող են բաշխվել մյուս խմբերում: Տարբեր խմբերի պահանջներին բավարարող փաստաբանը կարող է Շահառու հանդիսանալ միայն մեկ խմբի համար: Այն դեպքում, երբ տվյալ խմբում Շահառուների տեղերն ավելանում են, ապա Հանձնաժողովը կարող է այդ տեղերը բաշխել նաև նույն խմբին համապատասխանող, սակայն նախկինում Բարերարի նվիրաբերությունից օգտված փաստաբաններին:
9. Շահառու չի կարող լինել այն փաստաբանը, ով՝
   1) ունի անդամավճարի չմարված պարտավորություն.
   2) երբևէ ընդգրկվել է Բարերարի սահմանած նվիրաբերության այլ շահառուների ցանկերում, բացառությամբ սույն կարգի 7-րդ կետի 1-ին, 2-րդ, 3-րդ և 5-րդ ենթակետերում, ինչպես նաև 8-րդ կետում նշված դեպքերի.
   3) հանդիսանում է Փաստաբանների պալատի աշխատակից կամ մարմնի անդամ:
10. Շահառու կարող է լինել սույն կարգի 7-րդ և 9-րդ կետերի պահանջներին բավարարող այն փաստաբանը, ով **մինչև 2019 թվականի նոյեմբերի 5-ը** (ներառյալ) դիմել է Հանձնաժողովին և Հանձնաժողովի կողմից ընդգրկվել է Շահառուների ցուցակում:
11. Շահառու հանդիսացող փաստաբանի արտոնագիրը կասեցնելու կամ դադարեցնելու դեպքում՝ կասեցման կամ դադարեցման պահին չմարված կանխավճարի չսպառված մնացորդը փոխանցվում է սույն կարգին համապատասխան որոշված մյուս փաստաբանին: Սույն կանոնը գործում է նաև այն դեպքում, երբ Շահառու հանդիսացող փաստաբանը անդամավճարից լրիվ կամ մասնակի ազատվելու արտոնություն է ձեռք բերում:
12. Շահառուների ցուցակի հիման վրա Շահառուին հանձնվում է «**փաստաբան Եզեգելյանի 2019-2020 թվականների օժանդակություն**» անվանակարգով հավաստագիր:

* * *

III. ԵԶՐԱՓԱԿԻՉ ԴՐՈՒՅԹՆԵՐ

13. Սույն կարգն ուժի մեջ է մտնում 2019 թվականի հոկտեմբերի 15-ից:
14. Սույն կարգով նախատեսված Շահառուների ցուցակը Հանձնաժողովի կողմից Պալատի ֆինանսական տնօրենի հաստատմանը պետք է ներկայացվի մինչև 2019 թվականի նոյեմբերի 10-ը:
15. Սույն կարգը կարող է փոփոխվել կամ լրացվել Պալատի նախագահի որոշմամբ:

* * *